25.000/9

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՌՈՒՑՈՂԻ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

*I-ին մաս*
*Շինարարական աշխատանք և հավելված (II-րդ մասից)*

331.881
Հ-21

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

38

331.881
Հ-21

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ․

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ
ԱՐՀՄԻՈՒԹԻՈՒՆ

# ԿԱՌՈՒՑՈՂԻ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

*1-ին Մաս*
*Շինարարական աշխատանք և հավելված (II-րդ մասից)*

Масс. Б-ка-Чит.
Библиотека Читальня им Тов. С. Шаумяна

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1929

25 FEB 2013

25.000/9

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ Հ-ՐԴ ՏՊԱՐ.

ԳՐԱՌ. № 1680 Բ. ՊԱՏՎԵՐ № 1653

ՏԻՐԱԺ 2000

ԶՈՒՌ

4916-50

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Վորովհետև հայերն լեզուն դեռևս չափազանց աղքատ է շինարարական և ընդհանրապես արդյունագործական գործածական բառերով ու տերմիններով, ուստի, նման բովանդակության գրքերի թարգմանությունը մեծ դժվարությունների յե հանդիպում։ Փորձելով հայերեն լեզվով հրատարակել կառուցող բանվորների արհմիության համար չափազանց կարևոր «Կառուցողների տարիֆային տեղեկատուն», կենտվարչությունն այնուամենայնիվ կարևոր համարեց գրքի վերջում կցել մի փոքրիկ բառարան։ Բառարանում ռուսերեն բառերը տված են հայերեն տառերով, նկատի ունենալով, վոր կառուցող բանվորների խոշոր մասը ռուսերեն լեզվով կարդալ չգիտե։ Բառարանում տված են նաև մի շարք այնպիսի բառեր, վորոնք տեղեկատույի մեջ չկան, սակայն առօրյա աշխատանքներում. շարունակ հանդիպում են։

# ՏԱՐԻՖԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Շինարարական բանվորների և աշակերտների սույն տարիֆային (վորակավորման) տեղեկատուն և տարիֆային ցանցերը մշակված են Կենտրոնական Կոմիտեյի կողմից Պրոֆմիությունների 7-րդ համագումարի և Պրոֆմիությունների Համ. Կենտ. Խորհուրդի տարիֆ-տնտեսական խորհրդակցության այն վորոշումների հիման վրա, վորը գտնում է անհրաժեշտ հրաժարվել միասնական տարիֆային ցանցից և արդյունաբերությունների առանձին բնագավառներում կիրառել առանձին ցանցեր։

Ցանցերի և տեղեկատույի վերամշակման ժամանակ, Կ. Կոմիտեն հաշվի յե առել աշխատավարձի փաստացի վճարումների դրությունը, նրա ստորաբաժանումը շինարարական ձեռնարկներում զանազան մասնագիտության և վորակյալ բանվորների մեջ ու բանվորների և աշխատանքի բաժանման պրակտիկան, ըստ տարիֆային ցանցի կարգերի։

Դրանց հիման վրա, նոր տարիֆային տեղեկատույի մեջ մտցրած են հետևյալ հիմնական փոփոխությունները։

1. Կառուցողների յուրաքանչյուր մասնագիտության համար վորոշված է, վորպես կանոն, 3 կարգ (3 ձեռք) հին տեղեկատույի 4—5 կարգի փոխարեն։

2. Մտցրած են մի շարք օժանդակ կառուցողական մասնագիտություններ, վորոնք հաճախ պատահում են շինարարական ձեռնարկության մեջ։

3. Կատարված է աշխատանքների վորոշ վերախմբավորում, վորոնք կատարվում են այս կամ այն մասնագիտության և վորակավորման հիման վրա, մեկ կարգից մյուս կարգ տեղափոխելով։

Գործնականում հին տարիֆային ցանցի առաջին յերեք կարգերը չեյին կիրառվում և բանվորների տարիֆիկացիան փաստորեն սկսվում եր 4-րդ կարգից (բացի շատ սակավ դեպքերից) և վերջանում 10-րդ կարգով։ Դրա հիման վրա նոր տարիֆային ցանցը կազմված է այն հաշվով, վոր առաջին կարգը համապատասխանում է նախկին 4-րդին, վորը և պետք է ինկատի առնվի տեղեկատույի և տարիֆային ցանցի կիրառման ժամանակ։

Աշակերտական ցանցի կարգերի թիվը և նրանց մեջ յեղած հարաբերությունները վորոշված են Կենտկոմի կողմից նույնպես իրերի փաստացի դրության հիման վրա։

Տեղական միության կազմակերպությունները և տնտեսական մարմինները մասնակցել են հիշյալ ցանցերի և տեղեկատույի մշակման գործում՝ նրանց նա-



խագծի վերաքննությամբ, վոր Կենտկոմը ուղարկել եր մի շարք միության կազմակերպություններին (50 կազմ.), տալու իրենց յեզրակացությունը, վորոնք վերամշակելով՝ շատ դեպքերում տնտեսական մարմինների հետ միասին՝ վերադարձրել են Կենտկոմին, տալով իրենց յեզրակացությունը։ Կենտկոմը հաշվի յե առել նախագծի վերաբերյալ բոլոր նկատողությունները։

Հաշվի առնելով, վոր նոր տարիֆային ցանցը և տեղեկատուն բարձրացնում է բանվորների տարիֆային դրույքը 12—14% (յուրաքանչյուր մասնագիտության մի քանի կարգերի կրճատման, կարգերի միջի հարաբերությունների վորոշ բարձրացման, աշխատանքների վորոշ խմբավորման հետևանքով և այլն) և նրանց կիրառումը առաջ կբերի գործող աշխատանքի նորմաների և գոյություն ունեցող գների վորոշ փոփոխություններ, Կենտկոմը մատնանշում է, վոր ցանցի և տեղեկատույի կիրառումը անբաժանելիորեն կապված է աշխատավարձի բարենորոգման հետ և պետք է հարմարեցնել նրա կիրառման։

Առանց աշխատավարձի բարենորոգման, նոր տարիֆային ցանցերի և տեղեկատույի կիրառումը, Կենտկոմը գտնում է աննպատակահարմար։

Նոր տեղեկատույի կիրառման ժամանակ Պրոֆկազմակերպությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն բանվորներին ըստ կարգի ճիշտ բա-

ժանելուն, թույլ չտալով տեղեկատույի սահմանած կարգերից դուրս գալ, նույնպես և առանձին մասնագիտությունների բաժանումը շատ կարգերի՝ քաննախառնված բաժանումը։ Ցեխե շինարարական աշխատանքների վրա զբաղված կլինեն այնպիսի բանվորներ, վորոնց մասնագիտությունը չի նախատեսնված տեղեկատույով, վորոնք աշխատում են մենակ կամ վոչ մեծ խմբակներով, նրանք պետք է տարիֆիկացիայի յենթարկվեն կառուցողների ցանցի միջոցով և այդ աշխատավորների կարգավորումը վորոշվելու յե ԲԿՀ-ի կողմից, նրանց վորակի և ուրիշ պայմանների հիման վրա, վորը վորոշում է բանվորին այս կամ այն կարգին դասելու անհրաժեշտությունը։

Այն դեպքերում, յերբ այդ բանվորները աշխատում են մեծ խմբերով կամ ցեխերով (սղոցարաններ, ժամանակավոր շահագործում, ելեկտրոսարումների ցեխեր և այլն), նրանք պետք է տարիֆիկացիայի յենթարկվեն հիմնական միությունների տեղեկատուներով և ցանցերով։

Տեղեկատույի և ցանցերի փորձնական կիրառումը, չնայած վոր նրանք մանրակրկիտ կերպով մշակված են, բայց և այնպես կարող է անհրաժեշտ դարձնել մտցնելու այս կամ այն փոփոխությունները և ուղղումները։ Ուստի Պրոֆմիութենական կազմակերպությունները պետք է անմիջապես հայտնեն Կենտկոմ բոլոր նկատած թերությունների մասին, վորոնք ի նկատի կառնվեն հետագա տեղեկատուների և ցանցերի մշակումների և ուղղումների ժամանակ։

Հ.Կ.Բ.Ա.Մ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

27-ն մարտի 1928 թ.



«ՀԱՄԿԽ-ի հետ համաձայնեցրած է» 10/II—28 թ.
ՀԱՄԿԽ-ի Տարիֆանորմաժնի վարիչի տեղակալ՝ Տուլիկով։

## ՏԱՐԻՖԱՅԻՆ ՑԱՆՑԵՐ

### Բանվորական ցանց

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կարգ . . . . | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Կոեֆիցենտ. | 1,0 | 1,25 | 1,45 | 1,60 | 1,80 | 2,10 | 2,50 |

### Աշակերտական ցանց

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կարգ . . . . | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Կոեֆիցենտ. | 1,0 | 1,20 | 1,50 | 1,80 | 2,20 |

# ԲԱՆՎՈՐՆԵՐ

## 1. Հողափորներ

### 4. կարգ

Կատարում է յերկաթգծի հողաշերտի կարգավորման և այլ աշխատանք։ Գիտե և կառուցում է դրենաժներ։ Կատարում է հողային աշխատանքներ կավարով՝ պահպանելով թեքվածքները։ Գիտե և կատարում է պարտեզների, զբոսավայրերի մակերևույթի հատակագծում՝ հասարակ գծագրերով, նույնպես և շինում է կավատոփ հատակներ։

### 3 կարգ

Փորում է ջրմուղների և կոյուղիների առուները։ Փորում է ամեն տեսակ հիմքեր և հանում հողը։ Փորում է ձեվանով ցամաքացուցիչ, ճանապարհի և այլ առուներ, կտրում է ու դասավորում է կունձղ և պատրաստում է ամեն տեսակի ճեղաններ։

## 2. Ջրհորափորներ

### 5 կարգ

Փորում է զանազան խորության և զանազան նպատակի համար հորեր, մեջը փայտյա պատյան

դնում և գետաքարով սարքավորում, նույնպես կատարում է զանազան տեսակի իջնովի հորերի կառուցման աշխատանքներ (բետոնի օղեր, աղյուսի վորմածք յերկաթի ծայրակալով և այլն)։ Սորան են վերաբերում նաև հորաններում ու տուննելներում կատարվող աշխատանքները։

3 կարգ

Կատարում է բոլոր հորափոր ոժանդակ աշխատանքները՝ մասնագետ հորափորի ղեկավարությամբ,

### 3. Կոյուղիների խողովակներ դնողներ

4 կարգ

Դնում է նշանոցներ և նոցա վրայով ստուգում առուների հատակի թեքվածքը։ Կատարում է խողովակների դրումը, ճշտիվ պահպանելով տվյալ թեքվածքը։ Ստուգում է կցվածքների ամրությունը և միջոցներ է ձեռք առնում հողը լցնելու ժամանակ խողովակների կանոնավոր դրումը չխախտելու դեմ։

### 4. Հյուսներ

6 կարգ

Կատարում է բարդ թործումների կցումներ (ձըգվող հոլլանդական բուլթակով կապ), մեծ տարածությունների վրա բարդ ծպիղների պատրաստելը և տեղը դնելը, հոծ փայտյա սանդուղքներ պատրաստելը և տեղը դնելը՝ հովհարաձև ու պտուտակաձև աստի-



ճաններով, կիսակլոր (միակենտրոն) շրջանակների պատրաստելը և տեղը դնելը, ցցահարների կառուցումը և սարքավորումը, կամուրջների ամեն սիստեմի ֆերմաների կապելը և դնումը, նույնպես և բարդ տախտակամածների (գնդաձև, բազմակողմանի և վոլորակ), բարձր կարգի կորագիծ մակարդակների՝ առանձնապես կարևոր յերկաթ-բետոն կառուցվածքների համար, վորոնք պահանջում են մեծ ճշտություն (ջրանիվների սարքավորման, ջրատար առուների համար և այլն), բարդ վողնարկների կառուցումը և դրնումը կամարների և զանազան տեսակի բարդ ծածկերի համար և այլն։ Սույն կարգին են վերաբերում նաև ցցեր խփելու ցցահար բանվորները։

Ցույց տված աշխատանքները կատարելու համար պահանջվում է գծագրեր հասկանալը։

5 կարգ

Կատարում է հասարակ թործումներով կցումներ (մակագիր փական ուղիղ, բուլթակով և այն), անկյունների կցում (թաթով, ափսեյաձև թաթով և թաքուն բուլթակով), մաքուր հատակների տախտակամածը՝ հասարակ, փահաններով ու շրջանակներով, քիվերի, հասարակ շրիշակների գոտիների կառուցումը, մաքրում պատերի և միջնորմների, առաստաղների, մաքուր ու բարդ տախտակամածի կառուցումը (յեղևնաձև, փոսերով և այլն), հյուսնական դռների կառու-

ցումը: Աշխատում է կմախքային կառուցվածքներ պատրաստելու և կանգնեցնելու վրա, պատվարների և այլ կառուցվածքների վրա, հենովի և շպրենգել սիստեմի ծպեղների, արտաքին սանդուղքների, մաքուր ցանկապատերի, դարպասների, դռնակների, դռների, լուսամուտների շրջանակներ կապելու վրա (ուղղանկյուն), բնակելի շենքերի, հանգարների և ագուց վորմերի կառուցման վրա: Կատարում է աշխատանքներ բարձր (15 մետրից ավել) և բարդ լաստակների և վոչ բարդ կամուրջների կառուցման վրա:

Սրան է վերաբերում կտուրների ծածկելը գոնտով ու ժամանակավոր ամբարձունակների համար վիշկաների կառուցումը:

4 կարգ

Կատարում է չորսունների և տախտակների մաքուր մշակումը ագուցներ և ռուստիկներ հանելով, նրանց մասերի կցելը, հասարակ թործում, չորսուների դնումը, ցցերի պատրաստելը և կանգնեցնելը: Շինում է հասարակ վողնարկներ և տախտակամած՝ հասարակ վոչ մեծ տարածության կամարների և թաղերի համար, տախտակե հանգարներ, հովանիներ, ժամանակավոր ցանկապատ, դարպաս և դռնակներ, հասարակ լաստակներ մինչև 15 մետր բարձրությամբ:

Տախտակամածում է սև հատակներ, առաստաղները և միջնորմներ՝ սվաղի համար: Աշխատում է վր-



րաքաշի կորան կավարմածի վրա: Սղոցում է տախտակներ ընդյերկարությամբ, տաշում է գերաններ, աշխատում է շեպերի, պեղանների ամրացման վրա, սարքավորում է կեր մարելու փոսերը, պատրաստում է շաղախի վորմնադրական տաշտեր, խառնիչներ, մատույցներ, իշավոտեր, հողնակներ և այլն:

## 5. Խծծագործներ.

5 կարգ

Կատարում է խծծման աշխատանքներ մեծ ամբարների, տակառների և այլ իրերի՝ ձկնորսարաններում: Աշխատում է նավերի ջրասույզ մասերի, հատակի, փոկանիվի խծծելու վրա, նույնպես և մարդատար շոգենավի տախտակամածի, նավակների և հիդրոտեխնիկական կառուցվածքների վրա:

4 կարգ

Կատարում է մեկ կամ մի քանի շարք գերանե և տախտակե պատեր խծծելու աշխատանք, փայտյա շինությունների խծծվածք: Խծծում է դռների և լուսամուտների շրջանակների արանքը:

## 6. Ատաղձագործներ.

7 կարգ

Կատարում է ամենաբարդ աշխատանքներ, այն է՝ զանազան տեսակի փայտից—գծագրով կառուցում

ե ձևանոր առաստաղներ, պանելներ, բարդ և վոճավոր շքեղ դռներ և պարակալներ: Վողորկում ե ամեն տեսակի փայտեղեն՝ վերոհիշյալ աշխատանքների համար

Շինում ե կիսակլոր շրջանակներ (բազմակետարոն), լուսամուտների բարդ ապակեկալներ, լիրքավոր դռներ մի քանի միջնադռներով, փանելային գործեր, սանդուխքի բազրիք բարդ պրոֆիլով, վոլորտներով ու պտույտներով:

### 6 կարգ

Պատրաստում ե և կախում ապակյա դռներ, նույնպես և քիչ բարդ ապակեկալներ և դռներ 3 միջնադռներով, կառուցում ե լիրքավոր պատնեշ և պատի պահարաններ: Կատարում ե բոլոր բարդ ատաղձագործական վերանորոգումները:

Սորան ե վերաբերում նաև վերոհիշյալ իրերի վողորկումը:

### 5 կարգ

Պատրաստում ե ու կախում հասարակ ապակեկալներ (հանգարներում, ջերմոցներում և այլ այդ տեսակ շենքերում) և դռներ, հասարակ պատնեշներ, թարեքներ, լուսամուտի գոգեր:

Տեղն ե դնում դռների, լուսամուտների սարքերը: Պարտավոր ե կատարել բոլոր վոչ բարդ ատաղձագործական վերանորոգումները: Սորան ե վերաբերում



հասարակ, սպիտակ սեղանների, պահարանների, աթոռների և այլն պատրաստելը:

## 7. Պարկետագործներ.

### 7 կարգ

Թանգարժեք փայտերից կատարում ե պարկետային հատակների գեղարվեստական կտրվածագործական աշխատանքներ՝ ըստ նկարների:

Կատարում ե զանազան տեսակի փայտերից և զանազան տեսակի նկարների բարդ տեսակի պարկետային հատակների նշանահարում, վրաքաշում, զետեղում ե յերակներ՝ համաձայն տված նկարների, նաև այդ հատակների վերանորոգումը:

### 5 կարգ

Կատարում ե հասարակ հատակների վրաքաշում պատրաստի նշանահարումների վրա (վահանավոր, «սպեցիալ» տեսակի և այն):

Նուրբ ռանդում և մաքրում ե ցիկլով բոլոր պարկետները, պատրաստում ե փափուկ կողեր: Վերանորոգում ե ամեն տեսակի պարկետներ և գիտե նրանց փնամելը:

### 4 կարգ

Տեսակավորում ե պարկետները, գիտե շաշկաների կողքերը ռանդելը և համարեցնելը միմիանց: Յերեսի կողմը ռանդելը և այլ օժանդակ աշխատանքներ:

4916/50
Библиотека
Читальня
им Тов.
С.Шаумяна

քարից հիմքերի խնամքով վորմածքը (քարերի կոփվածքով)՝ դրսի բաց մակերևույթների համար։

3 կարգ

Կառուցում է աղյուսե հատակներ, աղյուսի հասարակ տաշվածքը (գոտիներ, փորեկներ և այլն)։ Քարե պատերի մեջ բաց է անում զանազան տեսակի բացվածքներ (ակոսներ, ատամնավորմացքներ)։ Գիտե սովորական հիմքերի վորմածքը աղյուսից կամ քարից։ Բանդում է աղյուսի պատերը, մաքրելով պետքական աղյուսը, նույնպես և աղյուսե հատակները, պատրաստում է հիմքատակեր տապասներ դնելու համար, հասարակ կապերի դնումները պատերի վրա։

## 10. Քարտաշներ

6 կարգ

Ամեն տեսակի քարերից տաշում է և մշակում սանդուղքի աստիճաններ և այլ իրեր, հին դրվագների (որնամենտների) շրջումը։ Կատարվում է մաքուր տաշվածք ձեվանով, քարերի մշակումը և հղկումը, ձեվավոր կիսասյուների և սյուների մշակումը և այլն։

5 կարգ

Կատարում է ձեանով կիսասրբատաշ մակերևույթների կորվածքներով տաշվածք, պատրաստում է



յեզրաքարեր, սալեր գետափերի սարքավորման համար և այլ հասարակ աշխատանքներ։

4 կարգ

Կատարում է կոպիտ քարերի տաշվածք։

## 11. Հղկողներ

6 կարգ

Հղկում է ամեն տեսակի քարեր պրոֆիլների մշակումով՝ ձեռքով և մեքենայի միջոցով։

5 կարգ

Կատարում է տափակ մակերեսների հղկում ձեռքով։

## 12. Քար սղոցողներ

4 կարգ

Կատարվում է ձեռքով և մեքենայի միջոցով ամեն տեսակի քարերի սղոցելը։

## 13. Սալապործներ

6 կարգ

Կատարում է շենքերի բարդ նկարներով բազմակողմանի և կորագիծ սալահատակ, ճակատների և ներքին պատերի յերեսումը մի քանի գույների դրվագներով։

5 կարգ

Կատարում է բազմակողմանի և գունավոր սալիկներով հատակների և սանդուղքների հարթակների սալահատակը, պահպանելով պահանջված թեքությունը, շրջանակային և ցոկոլի սալվածքը: Միագույն ճակատների յերեսումը, կատարում է անկարան սիլիկատ տափակ հատակներ, միագույն դրվագով:

4 կարգ

Սալահատակում է ամեն տեսակի սալիկներով հորիզոնական մակերեսներ (մայթեր, հատակներ և այլն): Վերանորոգում է ամեն տեսակի սալահատակներ:

**14. Մոզաիկագործներ**

7 կարգ

Կառուցում է մոզաիկ հատակներ դրվագներով և պղնձե ձողերի դրումներով:

5 կարգ

Կառուցում է միագույն մոզաիկ հատակներ, վաքեր և այլն՝ նրանց փողորկումով: Պատրաստում է մոզայիկ աստիճաններ, հատակներ, լուսամուտի գոգեր և այլն՝ մակերեսների փողորկումով:



**15. Ասֆալտագործներ**

Կառուցող վարպետ:

5 կարգ

Կատարվում է շինության մեջը և դուրսը ասֆալտի բոլոր աշխատանքները լիցքով: Գիտե զանգվածների խառնուրդ կազմելը և ղեկավարում է զանգվածքը պատրաստելն, ինչպես և լիցքի հիմնատակ պատրաստել: Կատարում է մեկուսացումներ:

**16. Ցեփողներ**

3 կարգ

Ցեփում է ամեն տեսակի ասֆալտի զանգվածքներ (ջրաանթափանցիկ և այլն):

**17. Հարթողներ**

3 կարգ

Հարթում է ասֆալտի մակերեսները, պահպանելով թեքվածքները, փոսերի դրությունը և ջրհան կառուցվածքները:

**18. Վառարանագործներ**

6 կարգ

Կառուցում է յերկհարկանի մեծ արտադրության հացաթուխ վառարաններ, կալորիֆերներ, աղբակեզ հնոցներ՝ ոգտագործական կառուցվածքներում, ամեն սիստեմի և նկարի հախճապակի վառարաններ, հոլլանդական վառարաններ ջերմարկղներով: Շինում է կրականոցներ բոլոր սիստեմի կաթսաների համար (ջրա-

խողովակ, կաղմովի, ջեռացուցիչներով), նույպես և վառարաններ, վորոնք ունեն կրականոցի գազերի մեծ աստիճանի տաքություն։ Կատարում ե մուֆելավոր և բոցավոր վառարանների և հատուկ նշանակություն ունեցող հնոցների կառուցում (բովան վառարաններ ներկեր պատրաստելու համար և այլն)։

5 կարգ

Շինում ե ռուսական վառարաններ ներքնակրակնոցով և ակութով, հասարակ հացաթուխ և հոլլանդական վառարաններ, խոհանոցի օջախներ։ Կատարում ե կաթսաների, ջրախողովակային անցքերի ներքին պատենավորումը, բաղնիքների և ջերմոցների վառարանների կառուցումը։ Շինում ե ուտերմարկի վառարաններ, ծխնելույզներ, առանձնացումներ, դնում ե յերկաթի և կերակուր յեփելու օջախներ՝ նրանց պատելով աղյուսով։

3 կարգ

Շինում ե վառարանների տակի հիմքեր, դնում ե հորիզոնական ծխնելույզներ։ Դնում ե ժամանակավոր վառարաններ, տանում ե թիթեղի խողովակներ, քանդում ե հախճասալ վառարաններ՝ աղյուսը և հախճասալը մաքրելով։ Մաքրում են ծխնելույզները և քսուկում։



## 19. Սվաղագործներ

6 կարգ

Կատարում ե պատերի սվաղ ռուստիկներով, սվաղ՝ մարմարիոնի ավազ ավելացնելով (իտալական), բնական քարին նմանվող սվաղ՝ առանձին զանգվածից, չեչոտ քարերին նմանեցնելու համար կատարում ե խորդուբորդություն հարթ մակերեսի վրա և ամեն տեսակի նմանեցում ձեռանով։ Ձգում ե ներքին և արտաքին բարդ քիվեր և կոր գոտիներ։

5 կարգ

Սվաղում ե սյուներ, կամարներ, թաղեր և այլն։ Ձգում ե ներքին և արտաքին վոչ բարդ կոր գոտիներ, կատարում ե հարթ մակերեսների սվաղը փաբոններով։

4 կարգ

Կատարում ե ներքի և արտաքին պատերի, առաստաղների և այլ մակերեսների հարթ սվաղ կավարով և տախտակով, հենոցի և միջադիր շրջանակների խծծումը, լուսամուտի փայտյա և քարե գոգերի ամրացումը լիցքով, սվաղի քերելը և ավազով տրորելը։

## 20 Ներկարարներ—Նկարիչներ (ալֆրեյշչիկներ)

7 կարգ

Նկարում ե ձեռքով առաստաղների, պատերի

վրա՝ գրվագների նմանողությամբ: Նկարում է մի կամ մի քանի գույնի յերանգավոր գրվագ՝ համաձայն պատրաստի նկարի, փոխելով մաշտաբը: Կատարում է աշխատանքներ զանազան տեսակի տառերով: Կատարում է թվլած գործերի վերանորոգումը:

### 21. Ներկարարներ

6 կարգ

Գիտե բոլոր գույների ներկեր կազմելը, ինչպես յուղաներկ, նույնպես և սոսնձաներկ, ներկում է մաստիկայի (բևեկնի), եմալի և լաքի ներկերով: Ներկում է մակերեսներ (մետաղյա, սվաղի, փայտյա), նմանեցնելով զանազան տեսակ քարերի և փայտեղենի: Կատարում է վոսկեզօծ աշխատանքներ զանազան լաքերով, կպցնում է բարձր վորակի պաստառներ (սեղմադրոշմ, թավշյա, կաթնագույն և այլն) վերադիր կամ կցված:

5 կարգ

Ներկում է պատերի, առաստաղների յերեսները գծերի մեջ: Ներկում է միագույն գրվագներ: Մաքուր ներկում է ձիթաներկով և սոսնձաներկով սվաղած և փայտյա մակերեսներ: Կպցնում է միջին վորակի պաստառներ, աշխատում է տրաֆարետով և տանում է շտրիխներ: Պատրաստում է մակերեսներ մաքուր ներկելու և պատի նկարչության համար:



4 կարգ

Գիտե վոչ բարդ գույներ պատրաստելը, սպիտակացնում է կրով և կավիճով հարթ մակերեսներ, ներկում է կտուրներ, կպցնում է և սոսնձում պատեր և առաստաղներ սերպյանկայով, կարտոնով և այլն: Կպցնում է ցածր վորակի պաստառներ, կատարում է ձիթաներկով՝ մակերեսները ներկելու հասարակ աշխատանք: Պատրաստում է մակերեսներ ձիթաներկով կամ սոսնձաներկով ներկելու համար:

3 կարգ

Կատարում է կրով, կավիճով և սոսնձաներկերով մակերեսներ ներկելու հասարակ աշխատանք (ցանկապատներ, հակատներ, նկուղներ և այլն): Լվանում է ձիթաներկը սոդայով, ոճառով, պոտաշով:

### 22. Ապակի գցողներ

5 կարգ

Գցում է ապակիներ ձևավոր ապակեկալների մեջ: Գիտե գցել ապակի մաստաքով: Գցում է խութային, մեծ, հաստ ապակիներ:

3 կարգ

Գցում է հասարակ (կիսաբեմ) ապակիներ մանր ապակեկալներում, հանում է հին ապակիները, քսուկում է ակոսատները:

## 23. Թիթեղագործներ

### 6 կարգ

Ծածկում է մետաղյա թիթեղով ամեն տեսակի բարդ տանիքներ (գմբեթավոր, բրգաձև, թեփավոր և այլն) նկարով և գծագրով։ Շինում է բարդ ձագարներ՝ արմունկներ և հողմացույցներ, նշանում է, պատրաստում է և տեղն է դնում օդափոխ տուփեր և անցքեր։

### 5 կարգ

Ծածկում է թիթեղով հովանիներ, հասարակ տանիքներ, քիվեր։ Շինում է գլխադետներ ծխնելույզների գլխին, ճոռեր, հասարակ արմունկներ և ձագարներ։ Պատրաստում է վառարանների համար պատյաններ քիվերով, ցոկոլներով և այլն։ Ծածկում է բարդ կտուրներ արհեստական հերձաքարով և կղմինտրով։

### 4 կարգ

Պատրաստում է և խփում գոտիներ, սանդրիկներ, լուսամուտների դրսի գոգեր։ Շինում է հարթ պատյաններ վառարանների համար և հասարակ հողմացույցներ։ Պատրաստում է և կախում ջրհոս խողովակներ և կատարում է կտրան նորոգումներ։ Ծածկում է հասարակ կտուրներ արհեստական հերձաքարով։ Ծածկում է կտուրներ տոլով, ռուբերոյիդով և հասարակ կտուրներ՝ կղմինտրով։ Քանդում է կտուրներ և նորոգում է ծալուքներ։



## 24. Սալարկիչներ

### 4 կարգ

Սալարկում է մայթեր ուղիղ ձև ունեցող քարերով, սալարկում ու ամրացնում է շեպերը (մաժուխ և ծղնոտի վրա)։ Գիտե կառուցել ակոսներ և բարդ թեքվածքներ՝ ջրին ընթացք տալով, յերկու տակ սալարկում գետաքարերից և պատնեշների սալարում։

Աշխատում է նշանոցով և հարթաչափով, պահպանելով պահանջված թեքվածքները։

### 3 կարգ

Կատարում է հասարակ սալարկային աշխատանքներ գետաքարից, սալահատակում է քարով և նորոգում սալարկները։

## 25. Խիճ ջարդողներ

### 3 կարգ

Տվյալ չափերով պատրաստում է խիճ (ողակով) ամեն տեսակի քարերից յերկաթգծի, խճուղու և քաղաքացիական շինարարության համար։

### 2 կարգ

Փուխր քարերից և աղյուսից պատրաստում է խիճ, վորը չի պահանջում ճիշտ չափեր։

### 26. Սփռողներ

3 կարգ

Գիտե խճուղու քանդելը քլունգով։ Սփռում է խիճը հավասար շերտով, խճաշերտը հաստացնելու համար։

### 27. Ավագ Նորոգիչ

6 կարգ

Գրագետ է, սպասավորում է վորոշ շրջան 20-ից մինչև 30 կիլոմետր, հսկում է նրա դրությունը, բավական փորձառություն ունի խճուղային աշխատանքների մեջ, աշխատում է ճանապարհի վարպետի ղեկավարության տակ, ինքն է ղեկավարում ժամանակավոր և նորոգող բանվորների խմբակներին, անմիջականորեն հսկում է աշխատանքները կատարելիս, նույնպես և անձամբ մասնակցում է աշխատանքներին։

### 27 ա. Կրտսեր Նորոգիչ

4 կարգ

Գրագետ է, սպասավորում է վորոշ շրջան 5-ից մինչև 10 կիլոմետր, հսկում է նրա դրությունը, լցնում հավասարեցնում է գոյացած փոսերը խճուղիների և սալարկների վրա, հեռացնում է կանգնած ջրերը, ճանապարհի յեզրերքով փորում է առվակներ, առվակները մաքրում է և խորացնում։ Հետևում է, վոր չը



փչացվի ծառատունկերը, տնկում են նորերը, նորոգում է ճանապարհների յեզրերը, հետևում է խճի շերտի բերելուն, սփռելուն և կանոնավոր դրության մեջ պահելուն, նույնպես և խճի կանոնավոր տափանելուն գլդոնով (կատոկ) և ծածկող նյութերի լցքին։

## ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐ

### 28. Նշանակալներ

3 կարգ

Կարողանում է կանոնավոր նշանակալել գիծը ցույց տված ուղղությամբ, ինչպես դաշտավայրերում, նույնպես և դարուփոս տեղերում։ Ունի լավ աչքաչափ և վորոշ աչքաբացություն, նամանավանդ վերոհիշյալ աշխատանքների վայրերում (ձորերի չափելը և այլն)։

### 29. Բևեռ խփողներ

3 կարգ

Մասնագետ է ուղի գցելիս բևեռներ խփելու։

### 30. Տաշողներ

3 կարգ

Կատարում է շպալների նշան անելը և տաշելը հատուկ ուրագով (դիքսել), տալով տաշվածքին պահանջված թեքվածքը։ Աշխատում է շաբլոնով։

## 31. ՍԵՌՆԱԿՈՂՆԵՐ

2 կարգ

*Բանվորներ, վորոնք ունեն փորձնականություն սեռնակները դնելու և փոխարինելու՝ բլոկները կցելու ժամանակ։*

## 32. ՍՈՒԶԱՐԿՂԱԳՈՐԾՆԵՐ

7 կարգ

*Կատարում է հողի հանում սուզարկղներով, վերջինիս ցած իջեցնելու ժամանակ և լցնում է, սուզարկղի իջեցումից հետո, թե սուզարկղը և թե հորանները քարե վորմածքով։*

*Ծանոթե է սուզարկղային աշխատանքների հետ, հասկանում է և գիտե սուզարկղային աշխատանքներում գործադրվող մեքենաների հետ վարվելը։*

## 33. ՍԱՐՔԱՎՈՐՈՂՆԵՐ (ԱՐՄԱՏՈՒՐՉԻԿՆԵՐ)

6 կարգ

*Պատրաստում է և տեղը դնում գծագրով սարքավորում շենքերի բարդ կառուցվածքային մասերի (ֆերմաներ, յերկաթի սյուներ, լուսամուտի ապակեկալներ և այլն), կամուրջի ֆերմաների, ցանցավոր հեծանների, պատասխանատու հիդրոտեխնիկ կառուցվածքների, մեծ ծավալի և բարձրության բակերի, սիլոսելեվատորների և այլ բարդ աշխատանքների համար։*



5 կարգ

*Պատրաստում է և տեղը դնում սարքավորում՝ կամարների, հեծանների, յերկաթբետոն ծածկերի, սյուների, շենքերի պատերի և այլն։ Գիտե քիչ բարդ սարքավորման աշխատանքներ։*

4 կարգ

*Պատրաստում է և տեղը դնում բարդ կառուցվածքների՝ սարքավորումը վարպետի ղեկավարությամբ և ինքնուրույն պատրաստում է և տեղը դնում սարքավորումը վորմածքներում և նման հասարակ յերկաթբետոնի կառուցվածքներում։*

## 34 ՓԱԿԱՆԱԳՈՐԾ—ՋՐՄՈՒՂՆԵՐԻ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ

7 կարգ

*Կատարում է ամեն տեսակի ջրմուղային և ջեռուցման աշխատանքներ։ Ինքնուրույն հասկանում է գծագրեր։ Կատարում է գրինել խողովակների, ոդային ռեզերվուարների և բարձր ճնշման զանազան կառուցվածքների դնումը։ Կորացնում է մեծ տրամագծի (3″-ից բարձր) պղնձե խողովակներ։*

6 կարգ

*Անց է կացնում մագիստրալ գծեր։ Կատարում է բարդ ապարատների դրումը, ինչպես՝ ջրցաններ, շոգեկաթսաներ, ջեռուցման գործիքներ, կորացնում է մինչև 3″ տրամագիծ ունեցող պղնձե խողովակներ։*

### 5 կարգ

Կատարում է վոչ բարդ դրոշմներ, ինչպես՝ վաննաներ, հասարակ ջրցաններ և զանազան խողովատար աշխատանքներ գոլորշու և ջրային ջեռացման համար, ծռում է առանց սեղմվածքի 3''-ից ավել տրամագծի յերկաթի խողովակներ: Միացնում է խողովակներ կաթսաների, շոգեմեքենաների և պոմպերի հետ, կատարում է պոմպերի նորոգումներ: Լեհեմում է խողովակների շրթունքը իրենց խողովակների հետ:

### 4 կարգ

Կատարում է տների խողովակների մանր անցկացումներ, լցնում է խողովակները արճիճով, լեհեմում է ամեն դեպքում, կորացնում է 3''-ից պակաս տրամագծի յերկաթի խողովակներ: Կատարում է ջրմուղների, ջեռացման փոքր նորոգումներ և խողովակների մասնակի գցելը: Նրանց լեհեմելը և պարուրելը: Անց է կացնում ժամանակավոր ջրմուղ:

## 35. Դարբիններ

### 7 կարգ

Ղեկավարվելով գծագրերով և էսքիզներով, ինքնուրույն կերպով կատարում է պատշգամբների և սանդուխքների գեղարվեստական վանդակներ, զանազան նկարների զարդասներ դրվագներով, պսակներով և այլ զարդարանքներով:



### 6 կարգ

Ըստ գծագրերի և էսքիզների ինքնուրույն կատարում է յերկաթի սալքավորումներ և վանդակների, զարդասների վոչ բարդ աշխատանքներ և այլն:

### 5 կարգ

Պատրաստում է յերկաթեղեն վերանորոգման և գործիքների համար: Շինում է զանազան բարձակներ, գլխավոր մուտքերի ծածկեր, ապակեկալներ և լապտերների կառուցվածքներ:

### 4 կարգ

Պատրաստում է յերկաթեղեն փայտյա կառուցվածքների, մետաղե ծպիղների ֆերմաների համար, զանազան կառուցվածքների շաղկապներ, սանդուղքակալներ փակով, կատարներով:

Կատարում է նորոգումներ վագոնիկների, մուրճերի, էինգերի, բահերի և այլ: Պատրաստում է ցեցերի յերկաթեղենը և մետաղյա սարքեր զարդասների, դռների համար: Յերկաթապատում է ցցահատներ և կատարում է այլ մետաղի աշխատանքներ:

## 36. Մուրճահարներ

### 4 կարգ

Կատարում է դարբնի հետ խոշոր և բարդ գործերի աշխատանք, ծանոթ է յեռելու ձևերին, գիտե դարբնի բոլոր գործիքների նշանակությունը, մուրճով աշխատելու ժամանակ մատուցում է պահանջված

գործիքը, ղեկավարում է կոկսավառ և ածխավառ հնոցը, ներդրում և ջեռացնում է յերկաթեղեն՝ դարբնի ցուցմունքով։ Հմուտ կերպով թափով կռանահարում է թե աջ, թե ձախ կողմից։

3 կարգ

Աշխատում է դարբինների հետ ամեն տեսակի յերկաթեղեն պատրաստելու աշխատանքներում։ Աշխատում է մուրճով ամեն պայմաններում թե աջ, թե ձախ ձեռքով։

## 37. Կառուցող փականագործներ

6 կարգ

Պատրաստում է ըստ գծագրերի զանազան շինարարական և կամուրջների ֆերմաներ, նշանակում է և հավաքում գեղարվեստական իրեր (գեղարվեստական դարպասներ, վանդակներ, բազրիք, պողպատի շերտափեղկեր և այլն), հավաքում է և տեղը դնում պտուտակ սանդուղքներ։ Կատարում է ինքնուրույն չափվածքներ փականագործ-շինարարական աշխատանքերի։ Աշխատում է շինարարական պայմաններում։

5 կարգ

Կատարում է ըստ գծագրերի փականագործ—շինարարական աշխատանքներ, նախնթաց փականագործից զանազանվելով նրանով, վոր կատարում է թեթև (վոչ բարդ) աշխատանքներ, որինակ՝ չորսու-



ներից սյուներ, բազրիք, գեղարվեստական դռվագների յերկաթե դռներ ու նրանց փականքները և այլն։

3 կարգ

Կատարում է հասարակ փականագործ աշխատանքներ, աշխատում է հասարակ կառուցվածքների հավաքման վրա՝ ավագ փականագործի ղեկավարությամբ։

## 38. Ճանապարհների աշխատանքների մեքենավարներ

7 կարգ

Պատասխանատու յե իրեն հանձնած շոգե կամ մատորային ուղեմեքենայի համար (գլդան, տրակտոր և այլն), նրա միջոցով կատարում է ճանապարհային աշխատանքներ։ Հաշվառում է մեքենայի աշխատանքների վրա կատարած ծախքերը և կազմում է մեքենայի աշխատանքների վերաբերյալ ցուցակներ։ Ընթացիկ խնամք է տանում մեքենային, նույնպես կատարում է նրա մանր նորոգումները, հսկում է և մասնակցում մեքենայի հիմնական վերանորոգման աշխատանքներին։

## 39. Մեքենավարներ էքսկավատորների վրա

7 կարգ

Պատասխանատու յե էքսկավատորների աշխատանքներին։ Նրա օգնությամբ կատարում է աշխատանքներ, հաշվառում է նրա աշխատանքների վրա

կատարած ծախքերը և կազմում է աշխատանքի ցուցակներ: Կատարում է ընթացիկ մանր նորոգումներ, հսկում է և մասնակցում նրա հիմնական վերանորոգման աշխատանքին:

## 40. Մեքենավարի օգնական

4 կարգ

Մեքենավարի ղեկավարությամբ կատարում է մեքենան խնամելու աշխատանքներ, մասնակցում է ընթացիկ մանր նորոգումներին: Կատարում է մեքենայի քսուկը (սմազկա):

## 41. Մեքենավարներ՝ ցցահարի, վերելակի, ջուր կրող մեքենաների յեվ այլ կառուցվածքների:

6 կարգ

Գիտե շոգեմեքենայի տեղակայումը ներքվառվող շարժիչով, սարքավորում է փոխադրիչ մեխանիզմներ և հսկում է նրանց կանոնավոր աշխատանքին: Կատարում է վառելիքի ծախսի հաշվառումը: Կատարում է մանր նորոգում, ինչպես շարժիչ մեքենաների, նույնպես և փոխադրիչ մեխանիզմների: Մասնակցում է նրանց հիմնական վերանորոգման աշխատանքներին:

## 42. Մեքենավարներ կոտրատող յեվ բետոն պատրաստող մեքենաների

5 կարգ

Աշխատեցնում է մոտորը, հետևում է աշխատանքին



և մոտորի քսուկին: Մասնակցում է մեքենայի սարքավորման և տրանսմիսիաների վերանորոգման աշխատանքին: Ծանոթ է փականագործական աշխատանքների հետ:

## 43. Սղոցողներ

4 կարգ

Ձեռքի սղոցով սղոցում է ընդյերկարությամբ զանազան տեսակ փայտեղենից գերաններ: Անպատճառ պետք է գիտենան սղոցների սրելը և ուղղումը

## 44. Քարհատներ

4 կարգ

Կատարում է քար կտրելու աշխատանքներ (վաճառվող սալերի և աստիճանների): Կատարում է քարերի կոպիտ մշակման աշխատանք: Գիտե պայթեցման գործը և ծակեր հորատելը:

3 կարգ

Կտրում է հասարակ սալեր:

## 45. Շինարարական աշխատանքների օժանդակ բանվորներ

2 կարգ

Վորակյալ բանվորների ղեկավարությամբ, նրանց մոտ կատարում է տվյալ մասնագիտության ամեն տեսակի հասարակ աշխատանքներ: Ծանոթ է

համապատասխան նյութերի և գործածվող գործիքների հետ։ Օգնում է նյութերը ջոկելու աշխատանքին։

### 46. Սեվագործ բանվորներ

2 կարգ

Կատարում է ծանր աշխատանքներ, վորոնք պահանջում են մասնագիտական փորձ, ինչպես՝ աղյուս կրել խշտուկներով, հեծանների, գերանների և նման ծանրությունների տեղափոխում։

1 կարգ

Կատարում է ամեն տեսակի աշխատանքներ, վորոնք չեն պահանջում մասնագիտական փորձ։

---

## ՈԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### 47. Էլեկտրամոնտյորներ

7 կարգ

Տեղակայում է բաժանող վահաններ, կատարում է գեներատորների, տրանսֆորմատորների, մշտական և փոխվող հոսանքով մոտորների սարքավորման ժամանակ միացում։ Կատարում է ոդային ցանց տանելու աշխատանքներ, հաղորդման և միացման սարքավորումների հետ։ Հասկանում է գծագրեր։

6 կարգ

Կատարում է ավելի հասարակ սարքավորումների



տեղակայում։ Ծանոթ է հասարակ մոտորների և ապպարատների կազմվածքի հետ։ Կատարում է փորձարկում մեկուսացման՝ գետնի հետ միացնելու վերաբերյալ աշխատանքներում։ Կատարում է ավելի բարդ աշխատանքներ լուսավորության և ուժային բնույթ կրող գործերի վերաբերյալ, միայն ավագ մոնտյորների ղեկավարությամբ։ Ծանոթ է վոչ բարդ գծագրերի և սխեմաների հետ։

5 կարգ

Կատարում է լուսավորության և ուժային հաղորդակցության աշխատանքներ մետաղե թելով և զանազան հատման լարով։ Կատարում է լարի միացում հաշվեցույցների և Բերկմանի խողովակների միջոցով վոլտմետրների և ամպերոմետրների հետ։ Գիտե հասարակ սարքավորումների նշանակությունը և նրանց միացումը ցանցի հետ։ Հասկանում է հասարակ սխեմաներ։ Կատարում է ավագ վարպետների ղեկավարությամբ ելեքտրոմոտորների, վահանների և կենտրոնական կայանների այլ սարքավորումների տեղակայելու վերաբերյալ ավելի բարդ աշխատանքներ։

4 կարգ

Կատարում է բարձր վոլտի տրանսֆորմատորների տեղակայման սարքավորում, սարման տեղակայանք, կատարում է բարձր և ցածր լարման սա-

բումների աշխատանք՝ էլեկտրոմոնտյորի ղեկավարությամբ։

3 կարգ

Կատարում է բարձր վոլտի տրանսֆորմատորների տեղակայման սարքավորում, սարման տեղակայանք, կատարում է բարձր և ցածր լարման սարուններ աշխատանք էլեկտրոմոնտյորի ղեկավարությամբ։

### 48. Կենտրոնական ջեռուցման վառարաններ վառողներ

4 կարգ

Վառում է ջեռուցման բոլոր սիստեմի տնային կաթսաների վառարանները և կատարում է մանր ընթացիկ նորոգումներ, որ անհրաժեշտ է ջեռուցման կանոնավոր աշխատանքի համար։

### 49. Սղոցարանի մեքենավար

6 կարգ

Հսկում է սղոցարանի մեքենայի և կաթսայի կանոնավոր աշխատանքին։ Քանդում և հավաքում է մեքենան։ Կատարում է նրանց ընթացիկ նորոգումը։ Հսկում է սղոցի շրջանակի և տախտակի սարք լինելուն։



### 50. Կռունկի մեքենավար

5 կարգ

Ղեկավարում է վոչ մեծ ուժի էլեկտրական կռունկի աշխատանքներ։ Աշխատում է ծանրություններ բարձրացնելու և տեղափոխելու վրա։ Կարողանում է ինքնուրույն վորոշել մոտորների և մեխանիզմների պակասները։ Կատարում է մանր ընթացիկ նորոգումներ։ Քսուկում է մոտորները և կռունկի մեխանիզմը։

### 51. Վերելակի բանվորներ

2 կարգ

Բեռնած վագոնները բարձրացնում է հարթակի վրա և դատարկ վագոնները ներքև է իջեցնում։

### 52. Ոդափուք մեքենայի մեքենավար

6 կարգ

Ինքնուրույն ղեկավարում է մեքենան։ Հսկում է աշխատանքներին։ Կատարում է ընթացիկ, մանր նորոգումներ։

### 53. Շոգեկաթսա վառող

4 կարգ

Սպասարկում է շոգեկաթսաները, կարգավորում է կաթսաների վառելիքը վառելը։ Վառում է և խառ-

նում։ Գիտե ամեն տեսակի վառելանյութ գործածելու յեղանակը։ Հեռացնում է կրակարաններից խարամը և մոխիրը։ Պարտավոր է շոգեկաթսաների կրակարանները կարգին պահելու փորձառություն ունենալ։

### 54. Լոկոմբիլի կաթսա վառող

4 կարգ

Հսկում է լոկոմբիլի կաթսայի աշխատանքին, դարսում է վառելիքը և վառում, հասցնում է շոգու ճնշումը պահանջված բարձրության և հետևում է վերացնելու բոլոր թերությունները կաթսայի և նրան սպասարկող մեխանիզմների մեջ։

### 55. Գամողներ

5 կարգ

Գամում է ձեռքով և պնևմատիկ մուրճերով սառը և տաք դրության մեջ զանազան մետաղե կառուցվածքներ և կաթսայի ապպարատի ռեզերվուարների մասեր, վորոնք չեն յենթարկվում բարձր ճնշման։ Կատարում է կամուրջների, ծպեղների, սյուների, սայլակների, հեծանների, բակերի, ցիստերների, կաթսայի և ողակավոր պատյանների, զանազան արկղների և այլ աշխատանքների գամում։

4 կարգ

Կատարում է ձեռքով սառը գամում և պնևմա-



տիկ մուրճով զանազան հասարակ առարկաներ մանր գամերով, իսկ ավելի խոշոր կառուցվածքներ՝ ավագ գամողի ղեկավարությամբ։

### 56. Շաղափողներ

3 կարգ

Հասարակ շաղափային դազգահի վրա կատարում է շաղափային հասարակ բնույթ կրող մասսայական աշխատանքներ, հասարակ տեղակայումներ, ըստ նշանադրումների, ձևվաններով և այլն։

### 57. Փականագործ-գործիքագործ

7 կարգ

Պատրաստում է, սարքում է, ստուգում և նորոգում է զանազան ճիշտ չափիչ գործիքներ և պրիբորներ, մինչև 0,02 մ./մ. ճշտությամբ, վոչ մի անցք չթողնելով։ Գիտե բանվածքը խարել և կրկնփել։ Օգտվում է ճիշտ չափիչ գործիքներով և պրիբորներով։

6 կարգ

Ինքնուրույն կերպով պատրաստում է և սարքում զանազան գործիքներ մինչև 0,05 մ./մ. սահմաններում, առանց ճեղքեր թողնելու։ Պետք է իմանա նշանագրում կատարել, գծագրել պատկերավոր ուրվա-

նկարներ առանց յերկրաչափական հաշիվների, խարել և կրկնեփել բանվածքներն ու ոգտվել չափիչ գործիքներով։

5 կարգ

Պատրաստում է առանձին ճշտություն չպահանջող վոչ բարդ գործիքներ, կատարում է վոչ բարդ գործիքների և սարքավորումների կանոնավորում ու ճշտում, վորոնք ճիշտ և մաքուր կատարում են պահանջում։ Ոգտվում է հասարակ չափիչ գործիքներով և հասկանում է հասարակ գծագրեր։

### 58. Փականագործ-գործիքագործների ոժանդակ աշխատակիցներ

3 կարգ

Փականագործի ղեկավարությամբ կատարում է հասարակ գործիքների ոժանդակ մշակում։ Պարտավոր է գիտենալ մետաղի կտրատելը, խարտոցելը, հարմարեցնելը տորելով և ձեռքի գործիքներ զոդելը։

### 59. փականագործ-վերանորոգող

5կարգ

Կատարում է զանազան փականագործական աշխատանքներ՝ մեքենաներ և առանձին մեխանիզմներ վերանորոգելիս։



### 60. Նորոգող փականագործի ոժանդակ աշխատակից

3 կարգ

Կատարում է նորոգումների զանազան հասարակ ոժանդակ փականագործական աշխատանքներ՝ փականագործի ղեկավարությամբ։

### 61. փականագործ-հավաքող

5 կարգ

Կատարում է առանձին ճշտություն չպահանջող փականա-նորոգման աշխատանքներ։ Հավաքում է դազգահների, մեքենաների վոչ բարդ մասեր։ Ոգտվում է հասարակ չափիչ և ստուգիչ գործիքներով և հասկանում է հասարակ գծագրեր։

### 62. փականագործ-հավաքողի ոժանդակ աշխատակից

3 կարգ

Կատարում է զանազան հասարակ փականանորոգման աշխատանքներ մեքենաներ և մեխանիզմներ հավաքելիս և տեղակայելիս՝ փականագործի ղեկավարությամբ։

### 63. Թիթեղագործներ

5 կարգ

Կատարում է զանազան թիթեղյա աշխատանք-

ներ, պատրաստելով թիթեղից կամ այլ մետաղներից վոչ բարդ իրեր, ոգտվելով եսքիզներից և որինակներից։ Պատրաստում է զանազան յուղամաններ, բիդոններ, ճոռեր, ցինկի խողովակներ, արտաքնոցի թասեր, ջրաչափ ապակիների համար պատյաններ և այլ համանման իրեր։

4 կարգ

Կատարում է զանազան հասարակ թիթեղյա աշխատանքներ, պատրաստելով հասարակ իրեր կամ պատրաստվող առարկայի առանձին մանրամասնություններ։ Իսկ ավելի բարդ աշխատանքներ կատարում է պատրաստի ձևվանով։ Պատրաստում է հասարակ տուփեր ճարպի համար, դույլեր, թասեր, ջեռուցման բատարեաների և խողովակների պատյաններ։ Մաքրում և անագում է (կլեկում) բակերի համար թիթեղներ և այլ համանման աշխատանքներ։

## 64. Նշանող-կաթսայագործ

6 կարգ

Կատարում է մետաղյա կառուցվածքների նշանարկումներ, ինչպես որինակ՝ կամուրջների և ծպիգների ֆերմաների, մետաղյա սյուների, գամած հեծանների, սանդուղքների և այլն։

## 65. Պղնձագործներ

5 կարգ

Ինքնուրույն կատարում է հասարակ պղնձե աշխատանքներ, պատրաստելով ըստ եսքիզների և տեղին, համաձայն ձևվանների՝ հասարակ արմունկներ, ձագարաձևեր, շուցերներ, հասարակ ամանեղեն և այլն։ Մաքրում է թթվույտներով, լեհեմում և անագում, կորացնում է փոքր տրամագծերի խողովակներ, հարթում ու շիկացնում նրանց, լցնում առանցքակալները և նման աշխատանքներ կատարում։

Հասկանում է պատրաստվող առարկաների հասարակ գծագրերը և եսքիզները։

4 կարգ

Կատարում է հասարակ պղնձի աշխատանքներ, կորացնելով մանր խողովակներ՝ վոչ խիստ կորվածքով, խողովակների լեհեմումը, նույնպես և խողովակների շրթունքի և այլ պղնձե մանր մասերի լեհեմումը։

Անագում է, մաքրում է թթվույտներով և լցնում բաբբիտով առանցքակալները և այլ վոչ բարդ աշխատանքներ, ոգտվելով հասարակ եսքիզներով և պատրաստի ձևվաններով։

## 66. Պղնձագործի օժանդակ աշխատակից

3 կարգ

Կատարում է ամենահասարակ պղնձի աշխատանքներ՝ ավագ պղնձագործի անմիջական ղեկավարությամբ, խարտում, կտրատում և մաքրում է շին-

ված իրերը։ Կատարում է օժանդակ աշխատանքներ հնոցի կամ վառարանի մոտ, խողովակները լցնում է ավազով, անագելու նախապատրաստական աշխատանքներ և այլ նման գործեր։

### 67. Ավտոգենով յեռացնողներ

6 կարգ

Աշխատում է զանազան սիստեմի գազի (ավտոգեն) ապարատների վրա։ Կարող է յեռացնել, լեհեմել միջին բարդության չմշակած և վոչ բարդ մշակված մանրամասնություններ չուգունից, յերկաթից, պողպատից, հարկ յեղած դեպքում տալով ճնշման փորձ կատարելու, գիտե նույնպես և միջին հաստության պողպատ, յերկաթ կտրատելը, ծխատար խողովակների յեռումը, յերկաթի խողովակների շրթունքների լեհեմելը և այլն։ Պահանջվում է աշխատանքի փորձառություն և ստացվող գազը կարգավորել գիտենալ։

5 կարգ

Աշխատում է մանր չափերի գազի ապարատների վրա։ Կարող է կատարել հասարակ մանրամասնությունների յեռելը (օրինակ, ռեսսորների ոտերի մասերի, լծափայտերի սեպերի, կռունկների ճգաձողերի և գլդոնների, քառակուսիների և ունկերի, շոգեկառքերի կաթսաների կարգավորիչ գլանների և այլն)։



Պահանջվում է աշխատանքի փորձառություն և ստացվող գազը կարգավորել գիտենալ։

### 68. Ավտոգենով յեռացնողների օժանդակ աշխատակից

3 կարգ

Կատարում է յեռելու և լեհեմելու հասարակ մանրամասնությունների օժանդակ աշխատանքներ՝ յեռացնողի ղեկավարությամբ։

### 69. Սղոցասարքիչներ

6 կարգ

Կատարում է սղոցների ատամների կտրատումը, նոցա սրելը և ուղղելը, նրանց սարքավորումը դազգահների վրա՝ կտրատելու, տակառի, տախտակների համար։ Պարտավոր է հիմնականապես իմանալ զանազան համարների սղոցների գործածությունը, նայած սղոցվող փայտի չափսին և սղոցի տեղակայման՝ հաշվի առնելով փայտի վորակը և ստացվող ապրանքի տեսակավորումը։ 4-ից պակաս շրջանակ ունեցող գործարաններում։

5 կարգ

Կատարում է շրջանակային սղոցների սարքավորումը և ուղղումը, սղոցների ուղղումը՝ նրանց գործադրության ժամանակ։ Հետևում է սղոցների սրելուն և ատամների բացմանը։

## 70. Սրողներ

4 կարգ

Կատարում է սղոցների սրումը ինքնասրող նաժդակե շրջաններով և ատամների բացումը՝ համաձայն փայտի տեսակավորման, սղոցների հագցնելը շրջանակների մեջ։

## 71 Դազգահի շրջանակային աշխատողներ

7 կարգ

Աշխատում է զանազան սիստեմի արագաշարժ շրջանակների վերա։ Հետևում է շրջանակի ընթացքին, նրա կանոնավոր աշխատանքին, կանոնավորում է գերանների մատուցման արագությունը։ Պետք է գիտենա շրջանակների պակասները և նրանց վերացնելը ընթացքի ժամանակ։ Հետևում է գերանների կանոնավոր սղոցելուն, հաշվի առնելով սղոցվող փայտի պակասությունները։ Պարտավոր է սղոցանյութի ամենամեծ տոկոս տալ թե ըստ որակի և թե ըստ քանակի, ի նկատի առնելով շրջանակի ընթացքի արագության ավելի քան 220 շրջանառումը 1 րոպեյում։

5 կարգ

Սղոցում է գերաններ զանազան սիստեմի դանդաղընթաց շրջանակների վրա։ Աշխատանքների բընույթը նույնն է, ինչ որ արագաշարժ շրջանակների վրա։



## 72. Ենթաշրջանակայիններ

3 կարգ

Օգնում են շրջանակային աշխատողին իր աշխատանքներում։ Հետևում են շրջանակից դուրս յեկած սղոցվածքին, մի կողմ են գցում նրանց և հսկում շրջանակի գործողության։

## 73. Պտուտակող (փակահաս)

4 կարգ

Գերանը շրջանակի վրա դնելիս դասավորում է նրան, հետևում է գերանի կանոնավոր մատուցման՝ շրջանակի գործողության ժամանակ, հաշվի յե առնում գերանի պակասությունները, թերությունները և նրա ձեռնտու դրությունը սղոցման ժամանակ։

## 74. Եզրատողներ

4 կարգ

Աշխատում է կտրատող դազգահների վրա։ Տեղափոխում է սղոցները պահանջվող լայնության վրա, նայած փայտի որակին և այլ պակասություններին։ Հետևում է կանոնավոր սղոցվածքին, յեզերքի կանոնավոր ստանալուն և կանոնավորում է դազգահի գործողությանը։

2 կարգ (օժանդակներ)

Կատարում են տախտակների մատուցումը դազգահի վրա, ամրացնում են սղոցին մատուցվող տախ-

տակների ճանկերը։ Ընթացք են տալիս տախտակներին նրանց շարժման ժամանակ դեպի սղոցը, իսկ դազգահների գլանային մատուցման դեպքում, ուղղություն են տալիս տախտակներին դեպի գլանները և օգնում են կտրատողին։

## 75. Ծայր կտրողներ (ճակատողներ)

3 կարգ

Աշխատում են ընդլայնությամբ (խոտորնակի, տրամագծով) տախտակներ կտրատող դազգահների վրա։ Դասավորում են տախտակները սղոցի տակ տրված չափսերով, հաշվի առնելով նյութի անպիտությունը և պակասությունները։ Կատարում են անմիջապես կտրատումը կամ սղոցը սեղմելու միջոցով (ճոճանակավոր կամ հակակշիռ սղոցով), կամ մոտեցնում են սեղանը տախտակով, ճոճան սեղաններով դազգահների պտտող սղոցին։ Կատարում են սղոցի տեղակայումը և կանոնավորում դազգահի աշխատանքը։

2 կարգ

Մատուցում են տախտակները սղոցին ծայր կտրողի կարգադրությամբ և օգնում են նրան աշխատանքների մեջ,

## 76. Ռանդող

3 կարգ

Կատարում է աշխատանքներ հորիզոնական և



ուղղահայաց կտրիչ ունեցող դազգահների վրա։ Ինքնուրույն կարգավորում է կտրիչները, կարգավորում է դազգահը, ռանդում է զանազան հանդերձանքի տախտակներ, ագուցներ, կատարներ, գոտիներ, պաբակալներ և այլ աշխատանքներ՝ ըստ չափերի և նկարների։

## 77. Յուղ քսող

2 կարգ

Կատարում է յուղաքսում՝ գործարանի բոլոր տրանսմիսիայի, փայտասղոցային շրջանակների դազգահների մեխանիզմի, նույնպես և գործարանի ուժային կառուցվածքների, հետևում է ավտոմատ կերպով յուղ արտաթորող յուղամանների մեջ բավարար քանակի յուղ լինելուն։

## 78. Սղոցողներ

4 կարգ

Կատարում է աշխատանքներ ժապավենավոր և կլոր սղոցներով։ Գիտե ինքնուրույն կերպով, առանց նշանարկման, տվյալ չափերով՝ ճիշտ տնտեսումով կտրատել յեզրները, սղոցել չորսուներ և դուրս գցել սղոցելով պատրաստվող իրերի անպետք մասերը։ Կարող է ինքնուրույն դնել և սրել սղոցները։

## 79. Փորող դազգահների դազգահավորներ

4 կարգ

Կատարում է աշխատանքներ շղթայավոր փորող

դազգահների վրա բուլթակների համար բռներ պատրաստելու, համաձայն նրանց չափերի և հաստության տվյալ չափերով և նշանարկումներով։ Ինքնուրույն կատարում է կոթիչների սարքավորում։

## 80. Փայտահատներ

4 կարգ

Կտրում են և վեր գցում ամեն չափի, տրամագծի ու պինդ տեսակի ծառեր լեռնային և դաշտային ռելեֆների պայմաններում։ Ինքնուրույն բաժանում են ձողի՝ առանց տեխնիկական կազմի ղեկավարության, կատարում են փայտի ամենաձեռնտու օգտագործում, հաշվի առնելով ձողի պակասությունները և առավելությունները, կատարելով կլպումը կամ ակոսելով կեղևը։

3 կարգ

Աշխատանքի բնույթը նույնն է. բայց աշխատում են ապրանքային սովորական տեսակի փայտեղեն պատրաստելու վրա։

2 կարգ (օժանդակ)

Տանում են գործածական փայտի կտրելու և վեր գցելու օժանդակ աշխատանքներ։ Կատարում են պատրաստած փայտեղենի կիսամշակումը։



## 81. Արմատախիլներ

2 կարգ

Արմատախիլ են անում կոճղեր և ծառեր։

## 82 Նավաշինարարական հյուսներ

